

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 05.03.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ «Ակտիվ քաղաքացի» նախագծի՝ 2019թ.-ին քաղաքացիների կողմից առաջարկների ընդունումը, հրապարակումը և դրանց օգտին քվեարկության արդյունքների ամփոփումն իրականացրել է Երևանի քաղաքապետի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի հ.1074-Ա կարգադրությամբ ստեղծված հատուկ հանձնաժողովը:

Մասնակիցների կողմից ստացվել է ընդամենը 740 առաջարկ, որոնցից «Ակտիվ քաղաքացի» կայքի կանոններին համապատասխանել և հրապարակվել է 204-ը: Առաջարկները և դրանց ամբողջական պարունակությունը հասանելի են «Ակտիվ քաղաքացի» պաշտոնական հարթակի (<http://activecitizen.yerevan.am>) «Առաջարկներ» բաժնում:

Մեկնարկից մինչև քվեարկության ավարտը հարթակում գրանցվել է 8933 քաղաքացի, թողնվել է 858 մեկնաբանություն, նաև 15582 հավանում՝ 6500 քվեարկողներից:

Հիմք ընդունելով «Ակտիվ քաղաքացի» նախագծի 500 000 000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր բյուջեն, նախագծի կանոնները, համաձայն որոնց յուրաքանչյուր առաջարկի իրականացման բյուջեն չպետք է գերազանցի 30 000 000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամը, և քաղաքացիների հավանությունները, հանձնաժողովի կողմից իրականացման համար ընդգրկվել են ամենաշատ հավանումներ ստացած 17 առաջարկները՝ ընդհանուր բյուջեի միջոցների բաշխման հիմունքներով:

Իրականացվելիք առաջարկների ցանկը ներկայացված է ստորև.

- N1 // «Հ. Օջականի անվ. N 172 դպրոցի բակային տարածքը դարձնել ապահով և փոխել պատուհանները»՝ http://bit.ly/activecitizen2019_n1
- N2 // «Վերականգնենք «Կարմիր բլուր»-ը»՝ http://bit.ly/activecitizen2019_n2
- N3 // «Մարզական կենտրոն Հաղթանակ թաղամասում»՝ http://bit.ly/activecitizen2019_n3
- N4 // «Լեդ լուսավորություն Հաղթանակ թաղամասում»՝ http://bit.ly/activecitizen2019_n4
- N5 // «#Իմ քայլը հանուն Խարբերդի»՝ http://bit.ly/activecitizen2019_n5
- N6 // «Տաղավարի հարակից տարածքի բարեկարգում և մարզասարքերի տեղադրում»՝ http://bit.ly/activecitizen2019_n6
- N7 // «Խաղահրապարակի ստեղծում»՝ http://bit.ly/activecitizen2019_n7
- N8 // «Սկեյթ այգի (Skate Park)»՝ http://bit.ly/activecitizen2019_n8
- N9 // «Բարեկարգ Քանաքեռ-Զեյթուն համայնք. Այգի»՝ http://bit.ly/activecitizen2019_n9
- N10 // «Մարյան պուրակի բարեկարգում»՝ http://bit.ly/activecitizen2019_n10
- N11 // «Բարեկարգ Քանաքեռ-Զեյթուն համայնք. Խաղաղաշտ»՝ http://bit.ly/activecitizen2019_n11
- N12 // «Մանեքեններ անցուղիներին»՝ http://bit.ly/activecitizen2019_n12
- N13 // «Հերոսների ծառուղի»՝ http://bit.ly/activecitizen2019_n13
- N14 // «Վիրտուալ իրականության տաղավար Երևան քաղաքի թանգարանում»՝ http://bit.ly/activecitizen2019_n14

N15 // «Արևային տաղավար»՝ http://bit.ly/activecitizen2019_n15

- N16 // «Ամենագեղեցիկ դիտահորերը և փողոցի հետիոտնային անցումները Երևանում»՝ http://bit.ly/activecitizen2019_n16
- N17 // «Երգող նստարաններ»՝ http://bit.ly/activecitizen2019_n17:

Տեղեկացվում է նաև, որ հավանություն ստացած առաջարկների իրականացման համար այժմ իրականացվում է նախագծանախահաշվային առաջադրանքների գնման ընթացակարգով ձեռք բերելու գործընթաց, ինչպես նաև՝ մնացած առաջարկների գնման ընթացակարգով ձեռք բերելու գործընթաց:

Այս պահին համայնքային բյուջեից «Ակտիվ քաղաքացի» նախագծի հաղթող առաջարկները կյանքի կոչելու համար գումար չի ծախսվել: Գումարների բաշխումը տեղի կունենա մրցույթի (գնման ընթացակարգերի) արդյունքներն օրենքով սահմանված կարգով ամփոփելուց հետո:

Միաժամանակ տեղեկացվում է, որ գումարների ծախսման գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ կլինի Երևանի ավագանու հավանությունը, քանի որ «Ակտիվ քաղաքացի» նախագծի համար նախատեսված գումարները գտնվում են պահուստային ֆոնդում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ